ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 մայիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

67
(2733)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մայիսի վերջին օրերին Նիկոլ Փաշինյանը գալու է ԱԺ հանձնաժողով՝ 2022թ.-ի բյուջեի կատարողականը ներկայացնելու:
Սրանով պայմանավորված՝ հայրենի գործադիրում եւ օրենսդիրում խառն են այս օրերին:
Նախարարները շտկումներ են անում իրենց աշխատանքներում, որպեսզի թերացումներ չլինեն, վարչապետին ցույց տան, որ մեծ աշխատանք են տարել:
ՔՊ-ականներն էլ փորձելու են ամեն ինչ անել, որպեսզի Փաշինյանի խորհրդարան գալը հարթ անցնի, առանց միջադեպերի, անցանկալի հարցեր չհնչեն ընդդիմադիրների կողմից:
Բյուջեի կատարողականը ներկայացվելու է ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում. վարչապետը ներկայացնելու է կառավարության բյուջեի կատարողականը, իսկ մյուս նախարարները՝ իրենց ոլորտների, որից հետո վարչապետը եւ նախարարները կպատասխանեն պատգամավորների հարցերին:

Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում կան պետական կառույցներ, որոնք աշխատակիցների եւ կադրերի պակաս ունեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նարեկ Մկրտչյանի ղեկավարած աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության՝ ժողովրդագրության եւ ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության չորս հաստիքներից մեկը՝ ինտեգրված սոցիալական ծառայության բաժինը, պետ չունի: Համեմայնդեպս, այդ մասին են վկայում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կայքում տեղադրված պաշտոնական տվյալները: Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի եւ գնահատման վարչությունը չունի ամփոփ վերլուծությունների բաժնի պետ, այս պաշտոնը թափուր է դեռ նոյեմբերից, նույն վարչությունում թափուր է նաեւ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի եւ գնահատման վարչության պետի պաշտոնը. ֆինանսական եւ հաշվապահական հաշվառման վարչությունն էլ հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ չունի եւ կրկին՝ նախորդ տարվա նոյեմբեր ամսից: Այդ նույն ամսից պետ չունի նաեւ գնումների համակարգի բաժինը: Հավելենք, որ Նարեկ Մկրտչյանը, 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո, նշանակված չորրորդ նախարարն է: Մինչ այդ այս պաշտոնները զբաղեցրել են Մանե Թանդիլյանը, Զարուհի Բաթոյանը եւ Մեսրոպ Առաքելյանը: Այսինքն՝ նախարարության աշխատակազմը դեռ նախորդ տարվանից համալրել այդպես էլ չի ստացվում:

Ուշագրավ իրավիճակ է քրեակատարողական հիմնարկներում: Խնդիրը հասել է այնտեղ, որ ՔԿՀ աշխատակիցներն են դատապարտյալների հետ գործարքի գնում ու կլորիկ գումար «մեջ-մեջ» անում: Այս իրավիճակում հարց է առաջանում՝ ինչով է զբաղված ՔԿ ծառայության պետ Սերգեյ Ատոմյանը, երբ, իր ղեկավարած կառույցում, իր աշխատակիցները գործարքի մեջ են մտել դատապարտյալների ու նրանց հարազատների հետ: Նշենք,որ երեկ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հայտնեց, որ կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ՝ հիմնավորվել է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի աշխատակիցներ Հ. Խ.-ն եւ Ա. Գ.-ն, ի պաշտոնե լիազորված լինելով ապահովել քրեակատարողական հիմնարկում ներքին ծառայության եւ անվտանգության պահպանման կարգը, նախնական համաձայնությամբ, ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու՝ հիշյալ ՔԿՀ բջջային հեռախոսներ փոխանցելու համար, նույն հիմնարկի դատապարտյալներից պարբերաբար ստացել են շուրջ 2.827.800 ՀՀ դրամ կաշառք: Նշենք՝ այս բացահայտումները արվել են հենց Ատոմյանի ղեկավարման օրոք:

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը երկար ժամանակ փորձում էր ազատվել հայ-ռուսական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանից, բայց օրենսդրական կարգավորումների պատճառով չէր ստացվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հայ-ռուսական համալսարանի ռեկտորի ընտրման կարգը փոխվել է ռուսական կողմի ցանկությամբ: Դա ներառված է ՌԴ կառավարության կողմից հավանության արժանացած՝ «հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին» Հայաստանի հետ համաձայնագրի նախագծում: Նկատենք, որ փաստաթղթում ամրագրված են համալսարանի խնդիրները. դրանք ներառում են կրթական միջոցառումները, ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի հանրահռչակման քայլերը, ռուսաց լեզվի՝ ուսուցիչների խորացված վերապատրաստման կենտրոնի ստեղծումն ու զարգացումը, ռուսական կրթության ցուցահանդեսների եւ տոնավաճառների անցկացումը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դերի եւ ազդեցության ամրապնդումը եւ այլն: Եվ ահա, մեր տեղեկություններով, ռուսական կողմը փոփոխություն է առաջարկել նաեւ կառավարման ձեւում: Բանն այն է, որ այժմ համալսարանն իր կոնֆերանսի ժամանակ է ընտրում ռեկտորին, այսինքն՝ այն նշանակովի պաշտոն չէ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջարկվում է ստեղծել կառավարչական խորհուրդ, որը նման է հոգաբարձուների խորհրդին: Այն կազմված է լինելու 12 անձից՝ 6-ը հայկական եւ 6-ը ռուսական կողմերից: Այդ 12 անձինք են հենց հետագայում ընտրելու ռեկտորին: Ավելին, մեր տեղեկություններով՝ հայ դասախոսները, որոնք դասավանդում են համալսարանում, կանգնել են խնդրի առջեւ, քանի որ ռուսական կողմը ցանկանում է ավելի խորացնել ռուսաց լեզվով ուսուցումը, եւ դա էլ ենթադրում է՝ պետք է ռուսական կողմից դասախոսներ լինեն: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ռուսական կողմի նախագիծը դեռ պետք է համաձայնեցվի հայկական կողմի հետ, որից հետո պետք է ընդունվի ՌԴ Պետական դումայում, ապա ՀՀ Ազգային ժողովում եւ դրանից հետո նոր կմտնի ուժի մեջ:

ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՊԱԼԵԼ Է

Թշնամին արդեն մի քանի օր է՝ սադրանքների է դիմում՝ կրակելով Գեղարքունիքի գյուղերի ուղղությամբ:

Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները մայիսի 11-ին հրետանային եւ ականանետային միջոցներից կրակ են բացել Սոթքի մոտ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Նույն օրը Ադրբեջանի ԶՈՒ-ն Գեղարքունիքի մարզի Նորաբակ համայնքի ուղղությամբ է կրակել՝ կիրառելով հրետանային միջոց, ապա Վերին Շորժայի ուղղությամբ ականանետ է կիրառել:

Երեկ եւս ինտենսիվորեն կրակել է Սոթք եւ Կութ գյուղերի ուղղությամբ: Կութի եւ Սոթքի հատվածներում տեղեկայված հայկական դիրքերի վրա հակառակորդի կրակի հետեւանքով հայկական կողմն ունի 1 զոհ:

«Ժողովուրդ» օրաթերթ-ը սահմանային իրավիճակի վերաբերյալ զրուցել է «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանի հետ:

-Պարոն Աբրահամյան, ինչու՞ է Ադրբեջանը հերթական բանակցություններից առաջ լարում սահմանային վիճակը, ո՞րն է թշնամու նպատակը:

-Բանակցային գործընթացում այն դիրքավորումը, որն ունի Ադրբեջանը, ինքնին ենթադրում է սահմանագծի տարբեր հատվածներում լարվածության կտրուկ աճ, դրանք կլինեն տեղային մասշտաբով, թե կընդլայնվեն, կախված է իրավիճակից: Կոնկրետ Սոթքի ուղղությամբ Ադրբեջանը մի քանի խնդիր է լուծում: Առաջինը՝ Սոթքի հանքի աշխատանքները խոչընդոտելն է, ինչն արդեն մեկ ամիս է՝ տեղի ունենում: Սոթքի հանքավայրը մեծ նշանակություն ունի ոչ միայն այդ շրջանի համար, այլեւ երկրի պետական բյուջեի համար:

Երկրորդ, եթե Ադրբեջանը նպատակ դնի վերահսկողություն հաստատել Սոթքի հանքի նկատմամբ, դա ոչ միայն տնտեսական առումով է վտանգ ներկայացնում, այլ վտանգավոր է նաեւ մարտավարական տեղակայման առումով, քանի որ հանքից ներքեւ արդեն դաշտավայրային հատվածներ են, այսինքն՝ռազմական տեսանկյունից եւս վտանգ կա: Սրան զուգահեռ էլ Ադրբեջանը զարգացնում է «արեւմտյան Ադրբեջան» թեզը, ինչը վերաբերվում է սովետական շրջանում ՀՀ տարածք վերադառնալուն: Իհարկե, ադրբեջանական հիմնավորումները փաստական առումով ճիշտ չեն, բայց Ադրբեջանը փորձում է առաջ տանել այն թեզը, թե այդ մարդիկ պետք է վերադառնան, հիմա էլ, իբրեւ, փորձում են անվտանգությունն ապահովել: Այսինքն՝ Ադրբեջանն իր ագրեսիան ու տարածքային նկրտումները թաքցնում է, այսպես կոչված, փախստականների թեզի տակ:

-Պարոն Աբրահամյան, իսկ ի՞նչ օրակարգով է շարժվում Հայաստանը, ձեզ համար հասկանալի՞ են այս պայմաններում մեր իշխանությունների միակողմանի խաղաղասիրական կոչերը:

-Խնդիրն այն է, որ Հայաստանի պահանջատիրությունը ձեւավորվել է Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում: Ադրբեջանի ագրեսիան պայմանավորված է այսօրվա իշխանությունների քայլերով՝ անվտանգային եւ արտաքին քաղաքական ոլորտներում ունեցած ձախողումներով: Իշխանության գալուց հետո, հասկապես, 44-օրյա պատերազմից հետո Փաշինյանը բոլորին խաբում է, թե ինքը խաղաղություն է բերելու, բայց այդ խոստումներից հետո ամեն անգամ Հայաստանն ու Արցախը տարածքային եւ մարդկային նոր կորուստներ են ունենում:

Կարող ենք հստակ արձանագրել, որ այս իշխանությունը 5 տարվա ընթացքում իր հիմնական առաքելությունը, այն է՝ ապահովել ժողովրդի անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը, ինչպես նաեւ՝Արցախի անվտանգությունն ապահովելը , ոչ միայն չի կատարել, այլ այնպես է տապալել, որ Հայաստանը եւ Արցախը հսկայական տարածքային եւ մարդկային կորուստներ են ունեցել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԲԺԻՇԿՆԵՐԸ՝ ԹԻՐԱԽՈՒՄ

ՊԱՀԱՆՋ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտնում է.

«Հայաստանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցչից պահանջել եմ, որ հասցեական արձագանքի շտապօգնության մեքենայի ուղղությամբ կրակ բացած Ադրբեջանի զինված ուժերի հակաիրավական գործողություններին:

-Երեկ՝ ժամը 06:00-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրետանային եւ ականանետային միջոցներից կրակ են բացել Սոթքի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի վրա: Այս հանցավոր գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը կրակ է բացել նաեւ վիրավորում ստացած հայ զինծառայողին տեղափոխող շտապօգնության մեքենայի ուղղությամբ:

-Հերթական անգամ թիրախավորելով մասնագիտական պարտականությունները կատարող բուժաշխատողներին եւ շտապօգնության մեքենան՝ Ադրբեջանը կոպտագույնս խախտել է միջազգային մարդասիրական իրավունքի, Ժնեւի կոնվենցիայի դրույթները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հրատապ գրություն եմ ուղարկել ՀՀ-ում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցչին՝ ահազանգելով դեպքի մասին եւ ակնկալելով հանդես գալ հասցեական եւ կոնկրետ հրապարակային հայտարարությամբ՝ Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարման առնչությամբ:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետությունում ընդունել է Հունգարիայի Հանրապետության դեսպան Աննա Մարիա Շիկոյին (նստավայրը՝ Թբիլիսի)՝ հավատարմագրերի պատճենը հանձնելու առիթով: Այս մասին հաղորդագրություն է տարածել արտաքին գործերի նախարարությունը:

Շնորհավորելով պաշտոնը ստանձնելու առթիվ՝ Պարույր Հովհաննիսյանը հաջողություն է մաղթել դեսպանին իր առաքելությունում: Զրուցակիցները քննարկել են հայ-հունգարական երկկողմ եւ բազմակողմ համագործակցության զարգացման հնարավոր ուղիները, կարեւորել են քաղաքական երկխոսության ակտիվացումը:

Անդրադարձ է կատարվել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի՝ արդեն հինգ ամիս շարունակվող արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին, ինչպես նաեւ Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ոտնձգություններին:

Այս համատեքստում Պարույր Հովհաննիսյանն ընդգծել է Լաչինի միջանցք միջազգային փաստահավաք առաքելության գործուղման, ինչպես նաեւ Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշման իրականացման կարեւորությունը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ

Երեկ՝ ժամը 22:45-ի դրությամբ, սահմանում իրադրության փոփոխություն չի արձանագրվել. Սոթքի, Կութի եւ Վերին Շորժայի ուղղությամբ կրակի ինտենսիվության նվազումը պահպանվում է:

Պաշտպանության նախարարությունը հանդես կգա լրացուցիչ հաղորդագրությամբ:

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՆԻՍՏԻՆ

Ինչպես տեղեկացրել ենք՝ մայիսի 11-ին ՔՊ կուսակցությունը նախաձեռնող խմբի նիստ է արել, որը վարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նիստին մասնակցել է նաեւ արտգործնախարար Արարատ Միրզոյանը: ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել նիստից: Այսպիսով՝ նիստի սկզբում Նիկոլ Փաշինյանը խոսել է Ադրբեջանի՝ Սոթքի ուղղությամբ նախաձեռնած հերթական ագրեսիայի մասին, խոսել է դրա պատճառների եւ հետեւանքների մասին: Նիստի հիմնական մասը նվիրված է եղել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների վաշինգտոնյան բանակցություններին: Միրզոյանը մանրամասներ է ներկայացրել ՔՊ-ականներին Բայրամովի հետ բանակցություններից: Միրզոյանն ընդհանուր առմամբ բավարար է գնահատել բանակցությունները, միեւնույն ժամանակ ասել է, որ մի շարք կարեւոր հարցերի շուրջ կողմերը դեռ համաձայնության չեն եկել: Նիստի ընթացքում Փաշինյանը անդրադարձել է նաեւ Բրյուսելում Ալիեւի հետ սպասվող համդիպմանը: Նիստի մասնակիցներն էլ իրենց հետաքրքրող հարցերն են ուղղել վարչապետին եւ արտգործնախարարին՝ անվտանգային խնդիրների եւ բանակցությունների մասին:

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հրապարակվել են աշխատանքային օրենսգրքի նոր կարգավորումները, որոնք վերաբերում են վարժական հավաքներին մասնակից աշխատողներին: Այս օրենքի ընդունմամբ՝ մասնավոր ոլորտի գործատուները պարտավորվում են աշխատողին վարժական հավաքների ներգրավելու դեպքում առաջին 30 օրացուցային օրերի ընթացքում վճարել յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի հիմնական աշխատավարձի եւ այդ ընթացքում վարժական հավաքներին մասնակցելու օրացուցային օրերի համար՝ որպես զինծառայող հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը: 30 օրացուցային օրը գերազանցող ժամանակահատվածի համար աշխատողի աշխատավարձը որոշվում է գործատուի եւ աշխատողի համաձայնությամբ կամ կոլեկտիվ/աշխատանքային պայմանագրով նախատեսված կարգով: Օրինակ, եթե աշխատողի հիմնական աշխատավարձը 200,000 դրամ է, վերջինս ներգրավվում է վարժական հավաքների եւ դրա դիմաց, որպես դրամական հատուցում, պաշտպանության նախարարության կողմից ստանում է դիցուք՝ 80,000 դրամ, ապա գործատուն կպարտավորվի վճարել աշխատավարձից դրական տարբերությունը, այսինքն՝նշված դեպքում առնվազն 120,000 դրամ: Ինչ վերաբերում է պետական ոլորտի գործատուներին, ապա գործատուն կվճարի յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի հիմնական աշխատավարձի եւ այդ ընթացքում վարժական հավաքներին մասնակցելու օրացուցային օրերի համար՝ որպես զինծառայող հաշվարկված դրամական ապահովության դրական տարբերությունը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ օրենքի գործողությունը տարածվելու է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա՝ գործատուների կողմից վճարումն ուշ կատարելու դեպքում տուժանքի վճարման պահանջ չի առաջանա, քանի որ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավարձն ուշ վճարելու համար գործատուն աշխատողին պետք է տուժանք վճարի, եթե ուշացումը եղել է գործատուի մեղքով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԻՇՏ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ Է ԴԻՄՈՒՄ

Հայաստանը դրական է գնահատում Եվրոպական Միության դիտորդական առաքելության գործունեությունը: Այս մասին մայիսի 12-ին լրագրողների հետ զրույցում ասել է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը:

«ԵՄ դիտորդները չէին կարող որեւէ արձագանք տալ մայիսի 11-ին Սոթքի հատվածում տեղի ունեցած միջադեպին: Նրանց դերակատարումն է զեկույցներ պատրաստել Բրյուսելի եւ ԵՄ անդամ երկրների համար, պարբերաբար այցելել սահմանի բոլոր հատվածները: Նրանց ներկայությունն արդեն իսկ ներդրում է իրավիճակը բարելավելու գործում, դա ստեղծում է հոգեբանական առումով ավելի ապահով մթնոլորտ: Այդ մասով առաքելությունն ամբողջությամբ կատարում է իր մանդատը: Իհարկե, ոչ ոք կասկած չուներ, որ որոշակի սադրանքներ կլինեն, դրանք մենք տեսնում ենք, սակայն այս պահին մենք կարող ենք դրական գնահատել առաքելության գործունեությունը»,- ասաց Հովհաննիսյանը:

Վերջինս նաեւ նշել է, թե չի հիշում բանակցությունների մի փուլ, երբ Ադրբեջանի կողմից սադրանքներ չլինեն: «95 թվականից ԱԳ նախարարության համակարգում եմ, չեմ հիշում բանակցությունների մի փուլ, երբ չլինեն նման սադրանքներ կամ մինչեւ հանդիպումը, կամ հանդիպումից հետո»:

Նրա խոսքով, Ադրբեջանի մոտ արդեն նման ավանդույթ կա, իսկ գնահատականը տրվել է թե ԱԳ նախարարության տարածած հայտարարության միջոցով, թե կառավարության նիստի բացմանը Նիկոլ Փաշինյանի խոսքով:

Անդրադառնալով Վաշինգտոնում բանակցությունների ընթացքում արձանագրած առաջընթացին, ինչպես հայտարարել են կողմերը, Պարույր Հովհաննիսյանը մանրամասնեց, կողմերը ծանոթացել են միմյանց պատկերացումներին:

«Ամերիկյան կողմը հնարավորինս արեց, որ ստեղծվեր դրական մթնոլորտ: Իսկապես արդյունավետ փուլ էր՝ հնարավոր պայմանագրի նախագծի շուրջ մոտեցնել դիրքորոշումները: Իհարկե, կան մի շարք կարեւորագույն հարցեր, որոնք դեռ պետք է քննարկվեն: Դրա համար էլ բարձրագույն մակարդակով Բրյուսելում կազմակերպվում է հանդիպում, որին կհաջորդի ԱԳ նախարարների մակարդակով հանդիպում Մոսկվայում: Կլինեն այլ հանդիպումներ եւս»,-ասաց Պ. Հովհաննիսյանը:

Քիշնեւում հունիսի 1-ին հնարավոր հանդիպման մասին՝ Պ. Հովհաննիսյանը չհերքեց, նկատեց՝Ադրբեջանը նշել է, որ դեռ չի հաստատել:

Նշենք, որ մայիսի 11-ին Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները հրետանային եւ ականանետային միջոցներից կրակ էին բացել Սոթքի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերին: Ադրբեջանական սադրանքի հետեւանքով հայկական կողմն ունի 4 վիրավոր: Վիրավոր զինծառայողներից 2-ի վիճակը գնահատվում է բավարար, 2-ինը՝միջին ծանրության: Նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Մայիսի 12-ին էլ ադրբեջանական կողմը Սոթքի ուղղությամբ կիրառել էր ԱԹՍ, որի հետեւանքով, վիրավորում էր ստացել ՀՀ ՋՈՒ 2 զինծառայող:

Եվրոպական Միության մոնիթորինգային առաքելությունը տեղակացվել է ապրիլի 11-ին Տեղ գյուղում տեղի ունեցած ընդհարման մասին, առաքելության կազմը միջադեպի ժամանակ Տեղում չի եղել. ապրիլի 12-ին խորհրդարանում պատգամավորների հետ հարցուպատասխանի ժամանակ, պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի հարցին, հայտարարեց արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

«Իրենց դիտարկումները արել են, իրենք իրենց զեկուցման մեխանիզմն ունեն ու ԵՄ արտաքին ծառայությանն են զեկուցում»,- ասաց Միրզոյանը: Մյուս հարցին, թե արդյոք ԵՄ-ն ունի՞ արագ արձագանքի մեխանիզմ նմանաբնույթ դեպքերի համար, արտգործնախարարն արձագանքեց՝ բնականաբար Հայաստանը անմիջապես տեղեկացնում է ԵՄ-ին ու ակնկալում արագ արձագանք:

Պատգամավորներից Հասմիկ Հակոբյանը խնդրեց մեկնաբանել երեկվա միջադեպի վերաբերյալ ադրբեջանական մամուլում տեղ գտած տեղեկությունն այն մասին, որ Հայաստանը կիրառել է հնդկական ու իրանական սպառազինություն: Ի պատասխան՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց, որ այդ ապատեղեկատվությունը սադրանքի մաս է, նպատակը ցույց տալն է Եվրոպային, որ նրանք մոնիթորինգային առաքելություն են ուղարկել մի երկիր, որը կիրառում է զինատեսակ Ադրբեջանի դեմ, «որի հետ դուք բոլորդ ունեք պրոբլեմներ, կիրառվել են պատժամիջոցներ եւ այլն»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԿՈՂՄ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Մայիսի 11-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Պորտուգալիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ժուաու Գոմըշ Կռավինյուի հետ:

Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային անվտանգությանը եւ կայունությանը վերաբերող հարցեր: ՀՀ ԱԳ նախարարն անդրադարձ է կատարել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման շուրջ վերջին զարգացումներին: Նախարար Միրզոյանը շեշտել է, որ Ադրբեջանի շարունակական ագրեսիվ քաղաքականությունն ու սադրանքները միտված են խաթարելու բանակցային գործընթացին ուղղված ջանքերը, ինչի դրսեւորումն էին ՀՀ ինքնիշխան տարանքի նկատմամբ մայիսի 11-ի հերթական սադրիչ գործողությունները:

Նախարար Միրզոյանը զրուցակցին է ներկայացրել նաեւ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված մարդասիրական իրավիճակը՝ ընդգծելով, որ Ադրբեջանի գործողությունները ոչ միայն խախտում են 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունն ու միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, այլեւ բացահայտ արհամարհանք են միջազգային գործընկերների հստակ կոչերին, Արդարադատության միջազգային դատարանի որոշմանը:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՓԱՐԻԶ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր, ԵԽԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության անդամ Արմեն Գեւորգյանը մայիսի 21-24-ը կգործուղվի Փարիզ:

Ընդդիմադիր պատգամավորը Ֆրանսիայում կմասնակցի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հանձնաժողովի, ինչպես նաեւ «Հանուն առողջ միջավայրի» կոնտակտային խորհրդարանականների ցանցի հերթական նիստերին:

ՆԱԽԱԳԱՀԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը մայիսի 11-ին մի շարք օրենքներ է ստորագրել:

Մասնավորապես՝ ««Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը վավերացնելու մասին» եւ «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ արձագանքման նպատակով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքները:

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔ

ԱՊՕՐԻՆԻ ՕՏԱՐՎԱԾ ՀՈՂԵՐ

Դատախազը 2023 թվականի մայիսի 10-ին հաստատել է Արարատի մարզի Այնթապ համայնքի (այսուհետ՝ նաև Համայնք) նախկին ղեկավար Կ.Ս.-ի կողմից պաշտոնական լիազորություններ չարաշահելու, լիազորություններն անցնելու եւ կեղծիք կատարելու առթիվ նախաձեռնված քրեական վարույթի մեղադրական եզրակությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել է Հակակոռուպցիոն դատարան:

Քրեական վարույթով ձեռք բերված տվյալներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչություն՝ համայնքային շահի պաշտպանության նպատակով հայց հարուցելու համար:

Հիշեցնենք, որ Այնթապ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած, ներկայում Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը զբաղեցնող (պաշտոնավարումը կասեցված է) Կ.Ս.-ն 2014 թվականի հոկտեմբերի 14-ին իր եղբորը՝Հ.Ս.-ին, տրամադրել է պաշտոնական փաստաթուղթ՝ քաղվածք, որում մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ այն մասին, որ գյուղապետարանում Հ.Ս.-ի անվամբ գրանցվել է 004 հա տնամերձ հողամաս: Այնուհետեւ նշված քաղվածքը՝ համայնքի ավագանու որոշման բացակայության պայմաններում, 2014 թվականի հոկտեմբերի 20-ին ներկայացրել է Կադաստրի կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանում, որի հիման վրա 2014 թվականի հոկտեմբերի 23-ին գրանցվել է Հ.Ս.-ի սեփականության իրավունքը Այնթապ համայնքի 12-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 10/1 հասցեում գտնվող, 0.03676 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ:

Բացի այդ, 2016 թվականի ապրիլի 13-ին քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով, օրինականացրել է Այնթապի 17-րդ փողոցի 6-րդ նրբանցքի թիվ 6 հասցեում գտնվող հողամասի սեփականատեր Ն.Ն.-ի իրավունքները եւ առողջության համար վտանգ ներկայացնող, արտադրական նշանակության՝156.16 քմ մակերեսով անասնագոմն ու տնտեսական պահեստը:

Մեկ այլ դրվագով՝ 2020 թվականի փետրվարի 7-ին Այնթապի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Հ.-ի օժանդակությամբ, համայնքի ավագանու համապատասխան որոշման բացակայության պայմաններում, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն է վաճառել Համայնքի Երեւան-Արտաշատ խճուղում գտնվող 435.7 քմ մակերեսով հողամասը, որից 76.16 քմ մակերեսով հողամասը ներառված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ օտարման ոչ ենթակա հողերի ցանկում, իսկ 23 քմ մակերեսով հողամասը եղել է Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածքը. Կ.Ս.-ն իրեն է վաճառել նաեւ 52.3 քմ մակերեսով ավտոտնակը, 127.5 քմ մակերեսով տնտեսական շինությունը, 20.1 քմ մակերեսով մետաղական տնակը:

Բացի այդ, 2020 թվականի փետրվարի 18-ին կրկին համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի օժանդակությամբ՝ Այնթապ համայնքի Երեւան-Մեղրի մայրուղում գտնվող 85.5 քմ մակերեսով հողամասը, որից 27.5 քմ մակերեսով հողամասը ներառված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ օտարման ոչ ենթակա հողերի ցանկում, եւ 85.5 քմ մակերեսով տեխսպասարկման կայանն օտարել է Գ.Մ.-ին:

2020 թվականի հուլիսի 27-ին կրկին առաջատար մասնագետ Ա.Հ.-ի օժանդակությամբ Այնթապ համայնքի 1-ին շարքում գտնվող 16.8 քմ մակերեսով հողամասը, որը ներառված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, օտարել է Ա.Ս.-ին:

Այնթապ համայնքի նախկին ղեկավար Կ.Ս.-ն 2020 թվականի օգոստոսի 4-ին առաջատար մասնագետի օժանդակությամբ՝ 30.9 քմ մակերեսով հողամասի վրա՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման եւ անվտանգության գոտում ինքնակամ կառուցված 3 քմ հիմքը, 1.8 քմ պարիսպը ճանաչել է համայնքային սեփականություն եւ օրինական: Համայնքի ավագանու համապատասխան որոշման բացակայության պայմաններում, գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով Լ.Հ.-ին է վաճառել 30.9 քմ մակերեսով հողամասը, 3 քմ հիմքը, 1.8 քմ պարիսպը:

2020 թվականի նոյեմբերի 30-ին կրկին առաջատար մասնագետ Ա.Հ.-ի օժանդակությամբ Այնթապ համայնքի նախկին ղեկավարը Երեւան համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Երեւան-Մեղրի մայրուղում գտնվող 3591.4 քմ մակերեսով հողամասը եւ դրա վրա ինքնակամ կառուցված 815 քմ մակերեսով հասարակական շինությունը, 3.4 քմ մակերեսով պահակատունը, 51 քմ կաթսայատունը, 29.7 քմ մակերեսով պարիսպը եւ 15.75 քմ մակերեսով ծածկն ուղղակի վաճառքով օտարել է Ա.Ս.-ին:

2020 թվականի դեկտեմբերի 18-ին Այնթապ համայնքի նախկին ղեկավար Կ.Ս.-ն առաջատար մասնագետ Ա.Հ.-ի օժանդակությամբ Համայնքի 9-րդ փողոցում գտնվող 12.8 քմ մակերեսով հողամասը, որը ներառված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ օտարման ոչ ենթակա հողերի ցանկում, 12.8 քմ մակերեսով ինքնակամ կառուցված խանութն օտարել է Ս.Հ.-ին:

Այնթապ համայնքի նախկին ղեկավարի Կ.Ս-ի նկատմամբ 2023 թվականի ապրիլի 21-ին հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը՝7 դրվագ), 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), 314-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք կատարելը՝ 8 դրվագ), 3152 -րդ հոդվածով (պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաեւ շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը):

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

2023 թվականի փետրվարի 7-ին ՀՀ պաշտպանության նախարարին է դիմել «Հանուն հայ զինվորի» հասարակական կազմակերպության նախագահ Դավիթ Թորոսյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող UAZ 3163-175 PATRIOT 2.7 մակնիշի թեթեւ մարդատար մեքենան ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ ԶՈՒ կարիքների համար օգտագործելու նպատակով նվիրելու առաջարկությամբ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ավտոմեքենան հանդիսանում է 2016թ. արտադրության. տրանսպորտային միջոցների շահագործման ժամկետները եւ ամորտիզացիոն մասհանումների կարգը սահմանող ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի հիման վրա ԶՈՒ գլխավոր շտաբի իրավասու ստորաբաժանման կողմից ս.թ. փետրվարին իրականացվել է ավտոմեքենայի մնացորդային արժեքի որոշում, որի արդյունքում ավտոմեքենան ՊՆ հաշվեկշռում հաշվառվելու է 4 մլն. դրամ արժեքով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ

ArmLur.am-ը հայտնել էր, որ Երեւանի 166 դպրոց են մտել ու աշակերտներին ծեծի ենթարկել: Ոստիկանությունն այս դեպքի առնչությամբ մանրամասներ էր ներկայացրել. «Մայիսի 11-ին՝ ժամը 12:57-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն Երեւանի թիվ 166 դպրոցի փոխտնօրենից հաղորդում է ստացվել, որ հարձակվել են դպրոցի վրա:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նշված դպրոցի 8-րդ դասարանի սաներից մեկի հայրը վիճաբանության ժամանակ հարվածներ է հասցրել 9-րդ դասարանի երկու սաների, որոնք վնասվածքներով տեղափոխվել են բուժօգնության:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Ավան եւ Նոր Նորքի քննչական բաժին»

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ աշակերտ Գ. Մանուկյանի հայրը՝ Մ. Մանուկյանն է դպրոց ներխուժել երկու տղամարդու հետ: Վերջինս այս պահին ձերբակալված է:

ՕՀԱՆՅԱՆԸ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախկին դատավոր Պարգեւ Օհանյանը դատի է տվել ՀՀ կառավարությանը եւ ՀՀ նախագահին: Մեզ հայտնի դարձավ, որ նա պահանջում է, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ արդարադատության խորհրդի 12.10.2007թ.-ի «Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Պարգեւ Օհանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԱԽ-7-Ո-19 որոշման առ ոչինչ լինելը հաստատելու կամ անվավեր ճանաչելու, ինչպես նաեւ վերջինիս լիազորությունները դադարեցնելու մասին ՀՀ Նախագահի 15.10.2007թ-ի ՆՀ-242-Ա հրամանագիրն անվավեր ճանաչել:

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԻՐԱՎԻՃԱԿ

Երեւանի փոխքաղաքապետի Կոնդ կատարած այցից հետո նրան ուղեկցողներն աղմկահարույց-անհարմար իրավիճակում հայտնվեցին. մի քաղաքացի ավտոմեքենան զայրացած վարելով երկար ազդանշան տվեց: Ամենաագրեսիվն իրեն դրսեւորեց Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը, որը հենց տեղում վարորդին մոտեցավ եւ վեճի բռնվեց: Նրան միացավ իր հետ ԱՄՆ-ից վերադարձած «Ոսկե պատառաքաղի» Սամվելը, որը ջանում է իր տիրապետության տակ գտնվող Մանկական երկաթուղու ձորում բազմաբնակարան շենքի շինթույլտվություն ստանալ: Ահա թե ինչու է Երեւանի քաղաքային իշխանությունների հետ փորձում լավ հարաբերություն պահպանել՝ հընթացս «թիկնապահ աշխատելով»: Եվ միայն Ավինյանի՝ սթափեցնող «հանգիստ» կոչից հետո խաղաղվեցին: Այնպիսի տպավորություն էր, թե վարչական շրջանի ղեկավարը եւ իր ընկեր Սամվելը նաեւ թիկնապահ են աշխատում ու «ռազբորկաներ» անում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 82 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳՈՎԱԶԴԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ապրիլի 29-ին Նոյեմբերյան համայնքի սահմանամերփ Դովեղ գյուղում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի ներկայությամբ հայտարարեց, որ գյուղություն ունի սահմանամերձ գյուղերում վարկային ծրագրով երիտասարդ ընտանիքների համար տուն կառուցելու ծրագիր,որի դեպքում մինչեւ 16 միլիոն դրամ վարկ վերցնելու դեպքում պետությունը փոխհատուցում է վարկի մայր գումարը եւ տոկոսները:

Նիկոլ Փաշինյանը նաեւ հարցրեց, թե գյուղացիները տեղյա՞կ են այդ ծրագրից: Տավուշի մարզպետին տեղեկատվական հարցում ուղարկեց «Ժողովուրդ» օրաթերթը, հարցնելով, թե այդ ծրագրից մինչ այժմ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի քանի՞ երիտասարդ ընտանիք է օգտվել այդ ծրագրից, մարզի ո՞ր գյուղերում են այդ ծրագրով տներ կառուցվում: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Ըստ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության, սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցությամ ծրագրով» (ՀՀ կառավարության 09.07 2022թ. թիվ 842-L որոշմամբ սահմանված կարգով) Տավուշի մարզից հաստատվել եւ իրականացման ընթացքի մեջ է 3 ծրագիր, 1-ը՝ Իջեւան համայնքի Բերքաբեր գյուղում, 1-ը՝ Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղում, 1-ը՝ Բերդ համայքի Արծվաբերդ գյուղում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տավուշի մարզպետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին նախատեսվում է պետական բյուջեից հատկացվելիք ընդհանուր 2,5 միլիոն դրամով իրականացնել մշակութային 4 միջոցառում: Ընթացիկ տարում Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված եւ իրականացվելիք միջոցառումները հետեւյալներն են՝ տարվա առաջին եռամսյակում իրականացվել է «Թատրոնի օր» միջոցառումը, տարվա երրորդ եռամսյակում նախատեսվում է իրականացնել «Վարդավառ» զանգվածային միջոցառումը եւ երիտասարդ նկարիչների ցուցահանդես-փառատոնը, տարվա 4-րդ եռամսյակում նախատեսվում է իրականացնել ազգային նվագարանների փառատոն: Մարզպետարանից հայտնել են, որ այդ միջոցառումներն իրականացնելու են ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի N211-Ն որոշմամբ հաստատված կազմակերպությունները:

Այդ որոշմամբ Տավուշի մարզում մշակութային միջոցառումները կիրականացնեն ոչ թե սահմանամերձ Տավուշի մարզում գործունեություն իրականացնող կազմակերպությունները, այլ ուրիշ տարածքներում գործող հիմնարկներ, որոնց ցանկը կառավարության այդ որոշման հավելվածում համացանցում հասանելի չէ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

2 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ԿԱՇԱՌՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի աշխատակիցներ Հ. Խ.-ն եւ Ա. Գ.-ն, ի պաշտոնե լիազորված լինելով ապահովել քրեակատարողական հիմնարկում ներքին ծառայության եւ անվտանգության պահպանման կարգը, նախնական համաձայնությամբ ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու՝ հիշյալ ՔԿՀ բջջային հեռախոսներ փոխանցելու համար, նույն հիմնարկի դատապարտյալներից պարբերաբար ստացել են շուրջ 2.827.800ՀՀ դրամ կաշառք:

Մասնավորապես՝պարզվել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ աշխատակից Հ. Խ.-ն, արգելված իրեր հանդիսացող հեռահաղորդակցության կապի միջոցներ, այդ թվում՝ բջջային հեռախոսներ ու լիցքավորման սարքեր ՔԿՀ տարածք տեղափոխելու եւ դատապարտյալներ Ռ. Ե.-ին ու Վ. Հ.-ին փոխանցելու դիմաց 2022 թվականի հունվարին նրանցից ընդունել է խոշոր չափերով կաշառքի առաջարկը: Այնուհետեւ հիշյալ դատապարտյալների կանայք, ձեռք բերելով բջջային հեռախոսներն ու դրանց լրակազմի մեջ մտնող իրերը, դրանք նախապես պայմանավորված վայրերում՝ տարբեր օրերի հանձնել են ՔԿՀ պաշտոնյային: Վերջինս էլ այդ արգելված իրերը տեղափոխել է քրեակատարողական հիմնարկ եւ հանձնել դատապարտյալներին: Նշված ապօրինի գործողության համար դատապարտյալներն իրենց կանանց միջոցով ՔԿՀ պաշտոնատար անձի տրամադրած բանկային հաշվեհամարին պարբերաբար, որպես կաշառք, փոխանցել են տարբեր չափերի, ընդհանուր՝ 2.827.800գումար:

Ընդ որում՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ վերը նշված կաշառքի գումարից 60.000 ՀՀ դրամը Հ. Խ.-ն ստացել է խմբի կազմում՝ նույն հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի մասնագետ Ա. Գ.-ի հետ միասին: Հ. Խ.-ն վերջինիս խնդրել է ապահովել իր անխոչընդոտ անցումը քրեակատարողական հիմնարկի հատուկ պահպանման գոտի՝ արգելված իրեր անցկացնելու համար, որի համար 60.000 ՀՀ դրամը որպես կաշառք փոխանցել է Ա. Գ.-ի բանկային քարտին: 2022 թվականի մայիսի 7-ին դատապարտյալներից մեկին արգելված իր հանդիսացող հեռահաղորդակցության կապի միջոցների նոր խմբաքանակը (14 բջջային հեռախոս) փոխանցելու համար Հ. Խ.-ն,հերթական՝ 300.000 ՀՀ դրամ կաշառք ստանալու առաջարկն ընդունելուց հետո, դրանք կրկին փոխադրել է «Նուբարաշեն» ՔԿՀ, սակայն հսկիչ-անցագրային կետով անցկացնելիս բռնվել է ԱԱԾ աշխատակիցների կողմից:

Խոշոր չափերով կաշառք ստանալու համար Հ. Խ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, Ա. Գ.-ին՝435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՔԿՀ պաշտոնատար անձանց կաշառք տալու համար դատապարտյալներ Ռ. Ե.-ին եւ Վ. Հ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով: Կաշառք տալուն օժանդակելու համար մեղադրանք է ներկայացվել նաեւ դատապարտյալների կանանց:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկող դատախազին, ում կողմից այն հաստատվել եւ ուղարկվել է դատարան:

ՍՈԹՔԻ ՀԱՆՔ

ՊԱՇԱՐՆԵՐԸ ՍՊԱՌՎՈՒՄ ԵՆ

Սոթքի ոսկու հանքավայրի բաց տարածքում աշխատանքների ավարտը նախատեսվում էր դեռ անցյալ տարվա աշնան վերջին: Սակայն Կառավարության հետ բանակցություններից հետո աշխատանքները շարունակվեցին: Այս մասին Ազգային ժողովում մայիսի 12-ին ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում հայտարարեց Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Հովհաննես Հարությունյանը՝ պատասխանելով ընդդիմադիր պատգամավորների հարցերին:

Աշխատակիցների զգալի մասին, նրա խոսքով, նախատեսվում էր պահել մինչեւ այս տարվա ամառ: Դրանից հետո նրանք պետք է կրճատվեին: «Այսինքն՝ կառավարության միջամտության եւ տեղի ունեցած բանակցությունների շնորհիվ աշխատակիցների աշխատանքի ժամկետը երկարաձգվեց եւս 5-6 ամսով: Այսինքն՝նրանց շարունակում են աշխատավարձ վճարել, թեկուզ հարկադիր պարապուրդի տեսքով»,- պարզաբանեց Հարությունյանը:

Հանքավայրը շահագործող «GeoProMining Gold»-ը սկսել է վերամշակման հաջորդ՝ փակ փուլը: Այսինքն՝ փոխնախարարի խոսքով, նախագծում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որոնք, այսպես թե այնպես, պետք է հանգեցնեին աշխատողների թվի կրճատմանը: Սակայն նա ձեռնպահ մնաց կոնկրետ թվեր ներկայացնելուց:

Հարությունյանը վստահեցրեց նաեւ, որ հակառակորդի կողմից շփման գծում պարբերական հրետակոծությունները չեն խանգարում դաշտի «փակ» շահագործման գործընթացին: Ավելին, հանքի բաց տարածքում աշխատանքները կավարտվեն մեկ ամսից՝ այնտեղ առկա ռեսուրսների լրիվ սպառման պատճառով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ճՏՊ. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍԻԳԻ ՁԿՆԿԻԹ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Շրջակա միջավայրի նախարարությունն Իրավական ակտերի եւ նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am հարթակում, շրջանառել է «Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

Նախարարությունից հայտնում են, որ Սեւանա լճում սիգի արդյունագործական որսի կանոնակարգման գործընթացի արդյունքում վերջին տարիներին Սեւանա լճում նկատվում է սիգի կենսազանգվածի աճ (2019 թվականին՝ 2668 տոննա, 2020 թվականին՝ 2345 տոննա, 2021 թվականին՝ 5348 տոննա), ինչը հնարավորություն է տալիս ապահովել Սեւանա լճում փոքր քանակությամբ ձկան արդյունագործական որսի իրականացում (2020 թվականին՝ 300 տոննա, 2021 թվականին՝ 300 տոննա, 2022 թվականին՝ 600 տոննա): Սակայն վերջին տարիների սիգի կենսազանգվածի աճի միտումը դեռեւս չի ապահովում վայրի ձկնատեսակի բնականոն աճն ու օպտիմալ թվաքանակը լճում (համաձայն որոշ գիտական տվյալների՝ մինչեւ 10.000 տոննա ընդհանուր պաշար, արդյունագործական որսը՝ շուրջ 2000 տոննա եւ ավել):

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում դեռեւս չունենք այնպիսի վայրի ձկնատեսակ, որի ձկնկիթը ունենա արտադրական նշանակություն, քանի որ դեռ անհրաժեշտ է ձկնատեսակի ծավալների շարունակական ավելացում:

Հաշվի առնելով Սեւանա լճում սիգի արդյունագործական որսի կանոնակարգման գործընթացի մեկնարկային եւ պիլոտային լինելու հանգամանքը, ինչպես նաեւ վերջին տասնամյակների ընթացքում լճի վրա մարդածին մեծ բացասական ազդեցությունն ու կենսառեսուրսների նկատմամբ ձեւավորված սպառողական վերաբերմունքը՝ հնարավոր բացասական հետեւանքները կանխարգելելու, արդյունագործական բարձր արժեք ունեցող վայրի ձկնատեսակի պահպանությունը – բնականոն վերարտադրությունը կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման արգելք:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՆՈՐ ԹՈՂԱՐԿՈՒՄ

«Յունիբանկ» ԲԲԸ-ն իրականացնում է բաժնետոմսերի նոր թողարկում: Հրապարակային առաջարկի արդյունքում բանկը նախատեսում է տեղաբաշխել 15 մլն ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմս, որոնց ընդհանուր արժեքը տեղաբաշխման գնով կազմում է 4.5 մլրդ ՀՀ դրամ:

Բաժնետոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է այցելել «Յունիբանկի» գլխամասային գրասենյակ կամ 54 մասնաճյուղերից մեկը: Բաժնետոմսերի նվազագույն փաթեթը, որը կարելի է ձեռք բերել, կազմում է 1 000 200 դրամ:

Բաժնետոմսերը կարող են ձեռք բերել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Շուկա ստեղծողն է «Արմբրոկ» ընկերությունը: Բաժնետոմսերի ցուցակումը տեղի կունենա Հայաստանի ֆոնդային բորսայում, ինչը մեծացնում է բաժնետոմսերի գրավչությունը, քանի որ արժեթղթերից ստացված եկամուտը չի հարկվում:

Բաժնետոմսերի նոր թողարկմամբ՝ Յունիբանկը շարունակում է ժողովրդական բանկ դառնալու իր ռազմավարությունը՝ ներգրավելով հասարակության լայն շերտերը բանկի կառավարմանը եւ այդպիսով դարձնելով այն ավելի արդյունավետ եւ թափանցիկ: Կայուն եւ վստահելի բանկի բաժնետոմսը խնայողությունների ներդրման եւս մեկ երկարաժամկետ եւ շահավետ հնարավորություն է:

Այսօր «Յունիբանկ»-ն ունի ավելի քան 180 բաժնետեր: «Յունիբանկ»-ի բաժնետոմսերի սեփականատերերի համար գործում են սպասարկման արտոնյալ պայմաններ՝ 25% զեղչ սակագնային ծառայությունների համար, ավանդների ավելի բարձր տոկոսադրույք, վարկավորման ավելի շահավետ պայմաններ:

Հրապարակային առաջարկի վերաբերյալ Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 03.05.2023թ.-ին ՀՀ ԿԲ թիվ 1/226Ա որոշման համաձայն: Ներդրողը կարող է ձեռքբերել Ազդագիրը եւ Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում եւ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային պատճենը՝բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am

Բաժնետոմսերի հրապարակային առաջարկը մեկնարկել է Ազդագրի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը եւ տեւելու է մինչեւ 22 աշխատանքային օր: Տեղաբաշխումը սկսելու օրը կհրապարակվի բանկի կայքում տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Ընդհանուր առմամբ, «Յունիբանկ«-ն իրականացրել է բաժնետոմսերի 6 թողարկում: 2022թ.-ին «Յունիբանկ»-ը ճանաչվել է Բաժնետոմսերի լավագույն տեղաբաշխող՝ Բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգով:

2022թ.-ի արդյունքներով «Յունիբանկ»-ը գրանցել է դրական ֆինանսական արդյունքներ գործունեության բոլոր հիմնական ուղղություններով եւ ապահովել մոտ 4.4 մլրդ դրամի շահույթ:

2022թ.-ին «Յունիբանկ»-ը սպառողական վարկերի քանակով զբաղեցրել է առաջատար դիրք:

Բանկի private banking-ը՝ «Յունիբանկ Պրիվեթ»-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի:

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝(+37410) 59 55 55:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

Հրապարակային սակարկություններով աճուրդ-վաճառք

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 02.06.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

-Մեկնարկային գին՝ 2,231,542 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

-Մեկնարկային գին՝1,797,631 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

-Մեկնարկային գին՝774,841 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, – Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

-Մեկնարկային գին՝650,866 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

-Մեկնարկային գին՝949,180 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

- Մեկնարկային գին՝2,866,911 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

-Մեկնարկային գին՝863,949 ՀՀ դրամ:

Լոտ - 10 Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝954,991 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝բավարար)

- Մեկնարկային գին՝ 27,556 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝բավարար)

- Մեկնարկային գին՝ 206,671 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

-Մեկնարկային գին՝183,708 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝22,963 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝անսարք)

-Մեկնարկային գին՝16,074 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝55,112 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

- Մեկնարկային գին՝68,890 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝22,963 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝ 59,705 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում եւ մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ՄՈՍՍՈՎԵՏ»-Ի ԹԱՏՐՈՆ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ՄԱՄԱ» ՊԻԵՍԸ

Միջազգային թատերական փառատոնի շրջանակներում մայիսի 11-ին բացառիկ հյուրախաղով Գյումրիում էր Մոսկվայի «ՄՈՍՍՈՎԵՏ»-ի անվան պետական ակադեմիական թատրոնը: Թատրոնը հայ հանդիսատեսին ներկայացավ ֆրանսիացի հայտնի դրամատուրգ եւ արձակագիր Ֆլորիան Զելլերի «Մամա» պիեսով, որը դրամատուրգի «Պապա», «Մամա», «Որդի» բեմական եռերգության մի մասն է: Բեմադրության ռեժիսորն է Պավել Պարխոմենկոն, նկարիչը՝ Յուլիանա Լայկովան, գլխավոր դերում՝ ՌԴ վաստակավոր արտիստուհի, «Ոսկե դիմակ» մրցանակի դափնեկիր Անաստասիա Սվետլովան:

Գլխավոր հերոսը փորձում է պարզել իր կյանքը, հասկանալ, թե ով է նա եւ ինչու է իր առջեւ ավերակներ եւ լիակատար մենակություն: Միակ բանը, որ ջերմացնում է նրան, սերն է որդու նկատմամբ, որը ֆիքսված գաղափար է դարձել հերոսուհու համար, ով հայտնվում է կամ իրականում, կամ մտքում ու միայն շատ կարճ ժամանակով:

«Առաջին անգամ եմ Հայաստանում ու զարմացած եմ՝ այսքան հյուրասեր ու հյուրընկալ է այս երկիրը: Մարդիկ պատրաստակամ են: Ասեմ, որ թեեւ ժամանակը շատ կարճ էր, բայց արդեն սիրահարվել եմ Գյումրիին: Ամեն ինչ շատ տպավորիչ է: Այստեղ ամեն մի քար ու թուփ ուրիշ է, շնչելն է ավելի հեշտ՝ասես պատմական ամրոցում լինեմ»,- ներկայացման ավարտից հետո, չթաքցնելով հուզմունքը, նշում է Անաստասիա Սվետլովան, անկեղծանալով՝ մինչ Գյումրի գալը իրենց տեղեկացրել էին գյումրեցի «բարդ» հանդիսատեսի մասին: «Ներկայացումը շատ բարդ է, հոգեբանական, ասել էին, որ պատրաստ լինենք, եթե չհավանեն՝ կթողնեն ու կգնան, բայց հավանելու դեպքում ջերմ ընդունելության կարժանանաք, բայց անկեղծ, նման երկարատեւ հոտնկայս ծափերի ու ջերմության չէինք սպասում: Սիրտս այս քաղաքը շատ սիրեց»,-ասում է դերասանուհին, նշելով, որ ուրախ կլինի եւս մեկ անգամ գալ ու խաղալ գյումրեցի հանդիսատեսի համար:

Վերջում դերասանուհին հավելեց՝ ներկայացումը թեեւ ստեղծված էր կամերային թատրոնի համար, սակայն Գյումրու դրամատիկականի բեմում այն բոլորովին այլ զգացողություն տվեց նաեւ դերասաներին:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ 2023»

ԲՐՅՈՒՆԵՏՆ ԱՆՑԱՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Երեկ «Եվրատեսիլ 2023»-ի երկրորդ կիսաեզրափակչում հայկական ղատվիրականության ներկայացուցիչ Բրյունետն իր փայլուն ելույթով անցավ եզրափակիչ փուլ:

Ելույթի ընթացքում երգչուհին, զարմացնելով բոլորին, հանդես եկավ պարային անակնկալով, որի մասին չէր բարձրաձայնել:

«Նրանք, ովքեր ինձ ճանաչում են, գիտեն, որ ես սիրում եմ պարել, եւ այդ պարային հատվածի մասին մտածել էինք դեռեւս այն ժամանակ, երբ ես գրում էի երգը»,-երեկ՝ մայիսի 11-ին, կիսաեզրափակիչ համերգից հետո տեղի ունեցած մամուլի ասուլիսին նշել է երգչուհին՝ հավելելով, որ երգի երկու տարբերակ են ունեցել առանց պարային ընդմիջման եւ պարով:

Համաեվրոպական երգի մրցույթում եզրափակիչ համերգին Հայաստանը ներկայացնող Բրյունետը ելույթ է ունենալու 17-րդ համարի ներքո: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է «Եվրատեսիլ 2023»-ի պաշտոնական էջից:

Նշենք, որ «Եվրատեսիլ 2023»-ի եզրափակչում հայտնվել է 26 պետություն, համերգը բացելու է Ավստրիան, եզրափակելու է հյուրընկալող պետությունը՝ Միացյալ Թագավորությունը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՖԻԼՄ՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ից հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ ֆրանսիական հեղինակավոր Mezzo հեռուստաալիքը փաստագրական ֆիլմ է նկարահանում հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի մասին:

Օրերս Երեւանում Mezzo-ի ստեղծագործական խումբը հարցազրույցներ է վարել մշակութային հայ գործիչների հետ.

ներկայացվել են Արամ Խաչատրյանի կյանքը, ստեղծագործական ուղին, Խաչատրյանի արվեստի թողած խորը հետքը հայ եւ համաշխարհային դասական երաժշտարվեստում: Նկարահանումներ են կատարվել Հայաստանի, մայրաքաղաք Երեւանի մի շարք վայրերում, որոնք ոգեշնչել են մեծ կոմպոզիտորին ստեղծագործելիս:

20 րոպե տեւողությամբ ֆիլմը նկարահանվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում:

Mezzo TV-ն դասական երաժշտության ամենահայտնի հարթակներից է: Այստեղ եթեր են հեռարձակվում հանրահայտ երաժիշտների կատարումներ, բացառիկ համերգների ձայնագրություններ, միջազգային փառատոներ, երաժշտական նորություններ, մեծահամբավ երաժիշտների մասին պատմող ֆիլմեր եւ տեսանյութեր:

Տարվա ընթացքում Mezzo-ի ստեղծագործական խումբը կլուսաբանի Հայաստանում իրականացվող խաչատրյանական հոբելյանական մյուս միջոցառումները, որոնց թվում են Արամ Խաչատրյան մրցույթն ու փառատոնը:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը կարեւորում է համաշխարհային ճանաչում ունեցող հարթակների հետ համագործակցությունը. ներկայացվում է Խաչատրյանի կոմպոզիտորական արվեստը՝ հայ մշակույթը հասանելի դարձնելով ինչպես դասական երաժշտության սիրահարների լայն շրջանակի, այնպես էլ մասնագետներին եւ երաժշտական մենեջերներին:

ՈՒԵՖԱ–Ն ԿՏԵՂԱՓՈԽՎԻ

Չեմպիոնների լիգայի եզրափակիչը կարող է Ստամբուլից տեղափոխվել Լիսաբոն: ՈՒԵՖԱ-ն զգուշանում է անկարգություններից, որոնք կարող են առաջանալ Թուրքիայում նախագահական ընտրությունների պատճառով: Ընտրությունների առաջին փուլն անցկացվելու է մայիսի 14-ին:

Աղբյուրի համաձայն՝ ՈՒԵՖԱ-ն արդեն ոչ պաշտոնական հարցում է ուղարկել Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիա՝ եզրափակիչը Լիսաբոնի «Էստադիու դա Լուժ» մարզադաշտում անցկացնելու հնարավորության վերաբերյալ:

Նախկինում Չեմպիոնների լիգայի եզրափակիչն արդեն երկու անգամ՝ 2020-ին եւ 2021-ին հետաձգվել էր Ստամբուլից՝ կորոնավիրուսի համաճարակի պատճառով: Չեմպիոնների լիգայի 2023 թվականի եզրափակիչը նախատեսված է հունիսի 10-ին:

● *Մայիսի 14-ին «Մեցցո» ակումբում կկայանա համերգային միջոցառում՝ «Another Story Band»: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝21:00:*

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ քանի կատեգորիաների է բաժանված Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության:

Նշան Հայրապետյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների), դասակարգվում է՝

1) գյուղատնտեսական նշանակության.
2) բնակավայրերի.
3) արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության.
4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների.
5) հատուկ պահպանվող տարածքների.
6) հատուկ նշանակության.
7) անտառային.
8) ջրային.
9) պահուստային հողերի:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողեր են համարվում այն հողերը, որոնք քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չեն պատկանում: Նկատենք, որ հողի հարկի գումարները քաղաքացիներն ու գյուղացիական տնտեսությունները պետական բյուջե են վճարում հավասար մասերով ոչ ուշ, քան մինչեւ հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը եւ մինչեւ հաջորդ տարվա ապրիլի 15-ը, իսկ ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները՝ եռամսյակը մեկ անգամ մինչեւ հաշվետու եռամսյակի հաջորդ ամսվա 25-ը:

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որն է Մաքսային միության ապրանքը: Ի՞նչ է իրենից ներկայացնում այն:

Սիրարփի Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք ե ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք կամ նրանց ներկայացուցիչներն իրավունք չունեն օգտագործելու ժամանակավոր պահպանության տակ գտնվող ապրանքները, այդ թվում՝ ժամանակավոր պահպանության վայրի տարածքից արտահանել դրանք մինչեւ դրանց բացթողումը հայտագրված մաքսային ընթացակարգով կամ մինչեւ սույն օրենսդրությամբ նախատեսված այլ գործողությունների ավարտը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր Նարեկ Մանասյանը դարձավ աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+5 +9 +16 +21		Արարատ	+13 +16 +23 +26	
Կոտայքի լեռներ	+5 +8 +17 +21		Արմավիր	+12 +15 +26 +28	
Կոտայքի նախալեռներ	+10 +12 +20 +23		Վայոց ձորի լեռներ	+4 +7 +18 +20	
Գեղարքունիք	+5 +8 +17 +21		Վայոց ձորի նախալեռներ	+12 +15 +27 +29	
Լոռի	+6 +10 +18 +22		Սյունիքի հովիտներ	+12 +15 +27 +28	
Տավուշ	+9 +12 +23 +25		Սյունիքի նախալեռներ	+3 +6 +17 +20	
Արագածոտնի լեռներ	+4 +7 +17 +21		Արցախ	+11 +15 +23 +27	
Արագածոտնի նախալեռներ	+9 +13 +21 +26		Երեւան	+12 +15 +25 +27	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*